



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 15(435) «25» հունիսի 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՐՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
368	«1933 թվականի դեկտեմբերի 26-ին Մոնտեվիդեոյում ստորագրված «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ԱՀ Գերագույն դատարանի ԳԴՈ-24 որոշումը
	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ	
369	«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում ստեղծելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2379-Ն հրամանագիրը.....	.
370	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2380-Ն հրամանագիրը.....	.
371	«Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի մարտի 19-ի ՆՀ-1531-Ն հրամանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2418-Ն հրամանագիրը..	..
	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
372	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի ՆԿ-9-Ն կարգադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆԿ-5-Ն կարգադրությունը
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
373	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 5-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 608-Ն որոշումը.....	.
374	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի N 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 615-Ն որոշումը.....	.

375	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի N 30-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 616-Ն որոշումը.....	.
376	«Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 617-Ն որոշումը.....	.
377	«2021 թվականի ամառային գորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 619-Ն որոշումը.....	..
378	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 632-Ն որոշումը.....	.
379	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 640-Ն որոշումը.....	.
380	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 641-Ն որոշումը.....	.
381	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 642-Ն որոշումը.....	.
382	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի N 288 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 26-ի N 319 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 643-Ն որոշումը.....	.
383	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 209-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 647-Ն որոշումը.....	.
384	«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով վիրավորում (վնասվածք) ստացած՝ ամբուլատոր պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում ստացած Արցախի Հանրապետությունում հաշվառված անձանց համար միանվագ դրամական օգնություն սահմանելու և դրամական օգնություն նշանակելու ու վճարելու կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 654-Ն որոշումը.....	..
385	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և փոփոխություններ, Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 658-Ն որոշումը.....	..
386	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 659-Ն որոշումը.....	...
387	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 660-Ն որոշումը.....	...

388	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 21-ի N 390-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 672-Ն որոշումը
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
389	««ՌԻՆԱ ԴԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 133-Ա հրամանը.....	.
390	«Վերոյան Արամ Վոլոդյայի անհատ ձեռնարկատիրոջը տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի N 141 հրամանը
391	«Ռոյալթի վճարողի կողմից 2021 թվականի յոյալթի կանխավճարի մեծությունը ինքնուրույն որոշելու մասին հայտարարության ձևը սահմանելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 144-Ն հրամանը.....	.
392	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 135 հրամանը.....	.
393	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2006 թվականի մայիսի 26-ի N 47-Ա հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 1033-Ն հրամանը

ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**1933 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՄՈՆՏԵՎԻԴԵՑՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՑՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ք.Ստեփանակերտ

23 հունիսի 2021թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան)՝ կազմով՝ Ն.Նարիմանյանի (նախագահող),
Ի.Կարապետյանի (զեկուցող), Ա.Աբրահամյանի, Հ.Աբրահամյանի,
Գ.Գրիգորյանի, Հ.Խաչատրյանի, Կ.Ղարայանի,

մասնակցությամբ՝ ԱՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ԱՀ
Նախագահի խորհրդական-ԱՀ Ազգային ժողովում ԱՀ Նախագահի մշտական
ներկայացուցիչ Ա.Դանիելյանի,

համաձայն Արցախի Հանրապետության Սահմանադրության
(այսուհետ՝ նաև Սահմանադրություն) 141-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ
կետի, 142-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատավարության
մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ, 14-րդ և 61-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց 1933 թվականի
դեկտեմբերի 26-ին Մոնտեվիդեոյում ստորագրված՝ «Պետությունների իրա-
վունքների և պարտականությունների մասին» կոնվենցիայում ամրագրված
պարտավորությունների՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը:

Գործի քննության առիթը ԱՀ Նախագահի՝ 2021 թվականի մայիսի 19-
ին Գերագույն դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, ԱՀ
Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը,
հետազոտելով «Պետությունների իրավունքների և պարտականությունների
մասին» կոնվենցիան (այսուհետ՝ նաև Կոնվենցիա), գործում առկա մյուս
փաստաթղթերը՝ Գերագույն դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին»
կոնվենցիան ստորագրվել է 1933 թվականի դեկտեմբերի 26-ին Մոնտե-
վիդեոյում (Մոնտեվիդեոյի կոնվենցիա)՝ Համաամերիկյան պետությունների 7-
րդ միջազգային համաժողովում, ուժի մեջ մտել 1934 թվականի դեկտեմբերի
26-ին:

Կոնվենցիայի բնօրինակի իսպաներեն, անգլերեն, պորտուգալերեն և
ֆրանսերեն տեքստերը համազոր են:

Կոնվենցիան ստորագրել են 17 պետություն, միացել են ևս 3 պետություն:

Կոնվենցիան բաղկացած է 16 հոդվածից:

Կոնվենցիան սահմանում է «պետություն» հասկացությունը, որին
համապատասխանելու դեպքում միավորը կարող է միանալ Կոնվենցիային:

Ըստ Կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ պետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված է, որ պետության՝ քաղաքական իմաստով, գոյությունը կախված չէ այլ պետությունների կողմից իրեն ճանաչելու հանգամանքից: Նույնիսկ նախքան ճանաչումը պետությունն իրավունք ունի պաշտպանելու իր ամբողջականությունն ու անկախությունը, ապահովելու իր պահպանությունն ու բարօրությունը և, հետևաբար, ինքնակազմակերպվելու այնպես, ինչպես ինքն է նպատակահարմար գտնում, ինչպես նաև մշակել օրենսդրությունը՝ ելնելով իր շահերից, կառավարել իր ծառայություններն ու սահմանել իր դատարանների իրավագործությունն ու իրավասությունները: Այդ իրավունքների իրականացումը չի կարող սահմանափակվել այլ կերպ, քան միջազգային իրավունքի շրջանակներում այլ պետությունների իրավունքների իրականացմամբ:

Կոնվենցիայով սահմանվում է պետությունների հավասարության սկզբունքը: Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետություններն իրավաբանորեն հավասար են, օգտվում են միևնույն իրավունքներից և օժտված են այդ իրավունքներն իրականացնելու հավասար հնարավորություններով: Յուրաքանչյուր պետության իրավունքների առկայությունը կախված է ոչ թե դրանց իրականացումն ապահովելու համար իր ունեցած լիազորություններից, այլ միջազգային իրավունքի շրջանակներում իր՝ որպես իրավունքի սուբյեկտի գուտ գոյության փաստից:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մի պետություն իրավունք չունի միջամտելու որևէ այլ պետության ներքին կամ արտաքին գործերին:

Կոնվենցիան ամրագրում է նաև պետությունների միջև ծագող վեճերի խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ պետությունների հիմնական շահը խաղաղության պահպանումն է: Նրանց միջև ծագող ցանկացած բնույթի տարաձայնություն պետք է լուծվի ընդունված խաղաղ միջոցներով:

Պետության տարածքի անձեռնմխելիության սկզբունքն ամրագրված է Կոնվենցիայի 11-րդ հոդվածում:

Կոնվենցիայում կարգավորված են նաև պետության ճանաչման եղանակների (ուղղակիորեն կամ ավտոմատ կերպով՝ լռելյայն, վերջինիս թվին է դասվում ցանկացած գործողություն, որը թույլ է տալիս ենթադրել նոր պետությունը ճանաչելու մտադրության մասին), պետության իրավագործության, կոնվենցիայի վավերացման, նրա գործողության հարցերը: Կոնվենցիայի 16-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիան բաց է այլ պետությունների միանալու համար:

2. Միանալով Կոնվենցիային՝ Արցախի Հանրապետությունը պետք է ստանձնի Կոնվենցիայի 8-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներում ամրագրված հետևյալ պարտավորությունները.

- 1) չմիջամտել այլ պետության ներքին կամ արտաքին գործերին,
- 2) որպես պետության առաջնային շահ՝ պահպանել խաղաղությունը, ցանկացած բնույթի տարակարծություն, որը կառաջանա պետությունների միջև, կարգավորել խաղաղասիրական հանրաճանաչ մեթոդներով,
- 3) որպես պետության վարքագծի կանոն՝ ստանձնել հստակ պարտավորություն չճանաչել այնպիսի տարածքային բարելավումները կամ հատուկ առավելությունները, որոնք ձեռք են բերվել ուժի կիրառմամբ՝ անկախ նրանից, թե դա արտահայտվել է գենքի գործածությամբ, դիվանագիտական ներկայացուցչություններին սպառնալիք ներկայացնելով կամ որևէ այլ հարկադրանքի միջոցով:

3. Սահմանադրության 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է:

Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

4. Կոնվենցիայի և Սահմանադրության նորմերի բովանդակությունից հետևում է, որ Կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները չեն հակասում և համահունչ են Սահմանադրությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 141-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 142-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, 51-րդ, 52-րդ, 61-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 1933 թվականի դեկտեմբերի 26-ին Մոնտեվիդեոյում ստորագրված՝ «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Արցախի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

**23 հունիսի 2021 թվական
ԳԴՈ-24**

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Մահմանադրության 93-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով ու հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ հոդվածը և 9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ **ո ր ո ջ ու մ եմ**.

1. Ստեղծել Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Թվայնացման գործակալություն» առանձնացված ստորաբաժանում:

2. Հաստատել Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Թվայնացման գործակալություն» առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հունիսի 16
Ստեփանակերտ
ՆՀ-2379-Ն

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության թվայնացման գործակալությունը (այսուհետ՝ թվայնացման գործակալություն) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն ապահովում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի և տնտեսության թվայնացումն ու թվային հմտությունների զարգացման խթանման ոլորտում աշխատանքների և դրանից բխող լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

2. Թվայնացման գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

3. Թվայնացման գործակալությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ: Թվայնացման գործակալությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

4. Թվայնացման գործակալության համակարգը կազմված է թվայնացման գործակալության պետից, պետի տեղակալից (տեղակալներից) և օգնականից, կառուցվածքային ստորաբաժանումներից (այսուհետ՝ ստորաբաժանումներ), ինչպես նաև կարող է կազմված լինել թվայնացման գործակալության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից, 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող առևտրային ընկերություններից:

5. Թվայնացման գործակալությունն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից:

6. Թվայնացման գործակալությունը, իր իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Թվայնացման գործակալությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

8. Թվայնացման գործակալությունը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Թվայնացման գործակալությունն իր կնքած գործարքներով Արցախի Հանրապետության համար ձեռք է բերում ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ կամ Արցախի Հանրապետության անունից օտարում է ապրանքներ, կատարում աշխատանքներ և մատուցում ծառայություններ, որոնց դիմաց ստացված հատուցումը հաշվեգրվում է Արցախի Հանրապետության միասնական գանձապետական հաշվի համապատասխան ենթահաշիվներին: Թվայնացման գործակալության կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

9. Թվայնացման գործակալությունն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Թվայնացման գործակալության կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Արցախի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

10. Թվայնացման գործակալության պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Արցախի Հանրապետությունը:

11. Թվայնացման գործակալության գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի փողոց, N 3:

**2. ԹՎԱՅԼԱՅՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ**

12. Թվայնացման գործակալության հիմնական խնդիրներն են՝

1) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) ոլորտների արդյունավետ կառավարումը և համակարգումը.

2) թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում աշխատանքների իրականացումը.

3) Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում, տնտեսության մեջ ներդրվող թվայնացման և էլեկտրոնային կառավարման համակարգերի նախագծումը, մշակումը և իրականացման գործընթացի կազմակերպումը.

4) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) բնագավառներում էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը և զարգացումը, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման խթանումը.

5) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) բնագավառներում միջպետական համագործակցությունը, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում Արցախի Հանրապետության շահերի պաշտպանությունը.

6) պետական փոխգործելիության հարթակի օպերատորի գործառույթների իրականացումը, այդ թվում՝ պետական համակարգում գործարկվող էլեկտրոնային հարթակների և կայքերի, ծրագրային լուծումների միջև փոխգործելիության ձևավորումը, առկա գործիքների հնարավորությունների ընդլայնումը, համակարգերի ինտեգրումը, արդիականացումը.

7) միջպետական մակարդակով միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծումն ու պահպանումը, էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի՝ Արցախի Հանրապետության պետական բաղադրիչի օպերատորի գործառույթների իրականացումը.

8) պետության կողմից սահմանված, մշակված, նախագծված էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը և դրանց գործունեության ապահովումը.

9) քաղաքացիների և իրավաբանական անձանց համար էլեկտրոնային հարթակների միջոցով հանրային ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով պետական ծրագրերից բխող միջոցառումների իրականացումը.

10) Արցախի Հանրապետության Նախագահի կողմից կամ օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների և նպատակների իրականացումը:

13. Թվայնացման գործակալությունն իր հիմնական խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) ոլորտների հավասարակշիռ և կայուն զարգացման համար պայմանների ստեղծումն ու ամրապնդումը.

2) Արցախի Հանրապետության միջազգային համաձայնագրերով սահմանված թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) ոլորտներին առնչվող հանձնառությունների իրականացումը.

3) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների և համացանցի (ինտերնետի) բնագավառներին վերաբերող նորմատիվ իրավական, նորմատիվ տեխնիկական ակտերի և ստանդարտների մշակումը, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այդ բնագավառների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ընդունումը.

4) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) բնագավառներում միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, կնքման, ինչպես նաև Արցախի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքներին մասնակցությունը և իր իրավասության սահմաններում միջազգային համագործակցության այլ ձևերի իրականացումը.

5) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և դեպքերում թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) բնագավառներին վերաբերող համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրումը ու դրանց միջոցով հավաքագրված տվյալների հիման վրա վարչական վիճակագրական ռեզիստրի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեզիստրի վարումը.

6) Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) բնագավառներին վերաբերող բաժինների մշակումը.

7) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) ոլորտների զարգացման պետական ծրագրերի ու միջոցառումների մշակումը, դրանց իրագործման ապահովումը և մոնիթորինգի իրականացումը.

8) թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի (ինտերնետի) ոլորտների միջազգային վարկատու կազմակերպությունների ֆինանսավորմանը հավակնող ծրագրերի ընտրությունը.

9) Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում ներդրվող թվայնացման և էլեկտրոնային կառավարման համակարգերի նախագծման, մշակման և դրանց իրականացման գործընթացի ապահովումը.

10) էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը և զարգացման ապահովումը.

11) էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման, հնարավորությունների ստեղծման, առկա լուծումների օպտիմալացման և այլ ծրագրերի և միջոցառումների իրականացումը:

3. ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Թվայնացման գործակալության կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության Նախագահը և Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, իսկ ղեկավարումը՝ թվայնացման գործակալության պետը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

15. Արցախի Հանրապետության Նախագահը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է թվայնացման գործակալության գործունեությունը.

2) հաստատում է թվայնացման գործակալության կանոնադրությունը, կառուցվածքը և դրանցում կատարվող փոփոխությունները.

3) սահմանում է թվայնացման գործակալության աշխատողների առավելագույն թվաքանակը.

4) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է թվայնացման գործակալության պետին և նրա տեղակալին (տեղակալներին), ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

5) որոշում է թվայնացման գործակալությանը հանձնվող գույքի կազմը և չափը:

16. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը՝

1) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում թվայնացման գործակալության պետի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները.

2) վերահսկողություն է իրականացնում թվայնացման գործակալությանը ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

3) հաստատում է թվայնացման գործակալության հաստիքացուցակը.

4) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

17. Թվայնացման գործակալությունը ղեկավարում է թվայնացման գործակալության պետը, որը պաշտոնում նշանակվում և ազատվում է Արցախի Հանրապետության Նախագահի կողմից:

Թվայնացման գործակալության պետը պատասխանատու է թվայնացման գործակալության առջև դրված խնդիրների և գործառնությունների պատշաճ կատարման, ինչպես նաև օրենքներին և այլ իրավական ակտերին դրանց համապատասխանության համար:

Թվայնացման գործակալության պետը ենթակա և հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին և Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին:

18. Թվայնացման գործակալության պետը՝

1) ղեկավարում և կազմակերպում է թվայնացման գործակալության ընթացիկ գործունեությունը.

2) Արցախի Հանրապետության Նախագահին և աշխատակազմի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում թվայնացման գործակալությանը վերապահված գործունեության ոլորտի հիմնական ուղղությունների վերաբերյալ.

3) թվայնացման գործակալությանը վերապահված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է թվայնացման գործակալության գործունեության հիմնական ուղղությունները.

4) վերահսկողություն է իրականացնում թվայնացման գործակալությանը ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

5) պատասխանատու է թվայնացման գործակալության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար.

6) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում թվայնացման գործակալության հաստիքացուցակը.

7) մասնակցում է Արցախի Հանրապետության կառավարության նիստերին.

8) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է թվայնացման գործակալության աշխատակիցներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս թվայնացման գործակալության անունից, ինչպես նաև տալիս է թվայնացման գործակալության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

10) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է թվայնացման գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ոլորտները.

11) ապահովում է թվայնացման գործակալությանը ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանությունը.

12) իր իրավասության սահմաններում ստեղծում է աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

13) կատարում է Արցախի Հանրապետության Նախագահի և Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի առանձին հանձնարարականները.

14) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

4. ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

19. Թվայնացման գործակալության գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է նրա տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից: Արցախի Հանրապետության Նախագահի կողմից թվայնացման գործակալությանը կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

20. Թվայնացման գործակալությունն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու և տիրապետելու իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները): Թվայնացման գործակալությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված

կարգով կարող է տնօրինել (օտարել, վարձակալության տալ) իրեն հանձնված գույքը և գույքային իրավունքները:

5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Թվայնացման գործակալությունն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններին ներկայացնում ֆինանսական, բյուջետային, հարկային, պարտադիր վճարների մասին ու վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

22. Թվայնացման գործակալության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Թվայնացման գործակալության գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, գործերի կառավարչության ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

6. ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

24. Թվայնացման գործակալության կառուցվածքը ներառում է ստորաբաժանումներ, որոնց ղեկավարները գործում են թվայնացման գործակալության պետի անմիջական ղեկավարությամբ:

25. Թվայնացման գործակալության ստորաբաժանումների ղեկավարները կազմակերպում ու ղեկավարում են ստորաբաժանումների գործունեությունը, իրականացնում են ստորաբաժանման աշխատողների միջև աշխատանքի բաշխումը, ապահովում աշխատանքային կարգապահությունը և պատասխանատու են իրենց առջև դրված խնդիրների իրականացման համար:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Կ. ՇԱՀՐԱՄՄԱՆՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության Նախագահի
2021 թվականի հունիսի 16-ի ՆՀ-2379-Ն հրամանագրի

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**

Կառուցվածքային ստորաբաժանումներ

Անվտանգության բաժին
Տեղեկատվական համակարգերի բաժին
Ծրագրավորման բաժին
Տեխնիկական բաժին
Համակարգերի ինտեգրման և աջակցության բաժին
Ֆինանսատնտեսական բաժին

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-107-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածները՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի սահմանումից բխող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-107-Ն հրամանագրի (այսուհետ՝ հրամանագիր) 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրությունում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 14-րդ կետի 1-ին ենթակետում «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետը,» բառերից հետո լրացնել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի պետը, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի թվայնացման գործակալության պետը,» բառերը, իսկ «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի տեղակալները,» բառերից հետո՝ «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի պետի տեղակալները, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի թվայնացման գործակալության պետի տեղակալները,» բառերը.

2) 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ ենթակետով՝ «2.2. «Թվայնացման գործակալություն» առանձնացված ստորաբաժանումը.».

3) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Աշխատակազմը կամ նրա առանձնացված ստորաբաժանումները կարող են ունենալ իրենց ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններ:».

4) 17-րդ կետի 3-րդ ենթակետում «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի պետին,» բառերից հետո լրացնել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի թվայնացման գործակալության պետին,» բառերը, իսկ «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի պետի տեղակալներին,» բառերից հետո՝ «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի թվայնացման գործակալության պետի տեղակալներին,» բառերը.

5) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22. Մույն կանոնադրության 19-րդ կետի 10-12-րդ ենթակետերում նշված գործառնություններն աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների մասով իրականացվում են համապատասխան առանձնացված ստորաբաժանման ղեկավարի կողմից:».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 46.1-ին կետ.

«46.1. «Թվայնացման գործակալություն» առանձնացված ստորաբաժանումը Արցախի Հանրապետության Նախագահի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա ապահովում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի և տնտեսության թվայնացումն ու թվային հմտությունների զարգացման խթանման ոլորտում Արցախի Հանրապետության կառավարության գործառույթների և դրանից բխող լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը»:

2. Հրամանագրի 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառուցվածքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-րդ և 18.2-րդ կետերով՝

«3.2. Թվայնացման գործակալության պետ

18.2. Թվայնացման գործակալություն»:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հունիսի 16

Ստեփանակերտ

ՆՀ-2380-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի ՆՀ-1531-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի մարտի 19-ի «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում ստեղծելու մասին» ՆՀ-1531-Ն հրամանագրի 2-րդ կետով հաստատված՝

1) կանոնադրության 4-րդ կետից հանել «գլխավոր մասնագետ-մամուլի պատասխանատուից» և «կադրերի գծով գլխավոր մասնագետից» բառերը.

2) կառուցվածքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4. Անձնակազմի կառավարման և հասարակայնության հետ կապերի բաժին»:

2. Մույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հունիսի 25
Ստեփանակերտ
ՆՀ-2418-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԿ-9-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» ՆԿ-9-Ն կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) կարգադրության հավելվածից հանել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը՝

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և զանգերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 55».

2) կարգադրության հավելվածը լրացնել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով՝

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և զանգերի բաժնի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագիր N 32».

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության հանրային կապերի և տեղեկատվական քաղաքականության համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագիր N 26».

3) կարգադրությամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության պետաիրավական ռլորտի վերահսկողության բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի N 78 անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետից հանել «իրավաբանական» բառը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հունիսի 21
Ստեփանակերտ
ՆԿ-5-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 հունիսի 2021թ.

N 608-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 5-ի «Ռեզոլուցիայի պաշտոնական կենտրոն» հիմնադրամը վերակազմակերպելու, «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը վերանվանելու, «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի կանոնադրությունը և հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 30-ի N 859-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 12-ի N 538-Ա և Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 7-ի N 316-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 57-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի հունիսի 10-ի N 608-Ն որոշման

«Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի փետրվարի 5-ի N 57-Ն որոշման

ԿԱԶՄ

**«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

Ռուղիկ Հյուսնունց	Արցախի Հանրապետության Նախագահի զլխավոր խորհրդական-հատուկ հանձնարարություններով դեսպան
Դավիթ Բաբայան	Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար
Արմեն Թովմասյան	Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարար
Նորայր Ավանեսյան	Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Նորայր Հովսեփյան	Արցախի հանրային հեռուստատեսության լրատվական բաժնի պետ-զլխավոր խմբագիր

»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2021թ.

N 615-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի «Պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և Արցախի Հանրապետության շրջանային բժշկական հաստատություն ուղեգրվող բժիշկ-մասնագետին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու կարգը, Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրվող ուղեգրի ձևը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 24-ի N 105-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 30-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«6. Հաստատություն ուղեգրվող բժիշկ-մասնագետին յուրաքանչյուր ամիս տրվում է ֆինանսական աջակցություն՝ իր բնակության վայրում տվյալ ամսվա համար հաշվարկված հիմնական աշխատավարձի 20 տոկոսի չափով, իսկ բնակության վայրից 30 և ավելի կիլոմետր հեռավորությամբ այլ բնակավայր ուղեգրվող բժիշկ-մասնագետին՝ տվյալ ամսվա համար հաշվարկված հիմնական աշխատավարձի 30 տոկոսի չափով»:

2) 27-րդ և 28-րդ կետերը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«27. Մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը ֆինանսական աջակցություն ստացող այլ վայր աշխատանքի ուղեգրված բժիշկները շարունակում են օգտվել ֆինանսական աջակցությունից մինչև 30 տոկոսի չափով (բացառությամբ թոշակառուների)՝ ծրագրում ընդգրկվելու պահից սկսած մինչև տասը տարի ժամկետով:

28. Հայաստանի Հանրապետությունից տեղափոխված՝ նախկինում ֆինանսական աջակցություն ստացող և Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան աշխատանքի ուղեգրված բարձրագույն բժշկական և հետբուհական մասնագիտական կրթություն ստացած բժիշկները կարող են շարունակել օգտվել ֆինանսական աջակցությունից մինչև 30 տոկոսի չափով (բացառությամբ թոշակառուների): Ֆինանսական աջակցություն ստանալու առավելագույն ժամկետը տասը տարի է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2021թ.

N 616-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի «Պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և Արցախի Հանրապետության շրջանային բժշկական հաստատություն ուղեգրվող բժիշկ-մասնագետին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու կարգը, Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրվող ուղեգրի ձևը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 24-ի N 105-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 30-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«9. Ծառայողական բնակելի տարածությունների բացակայության դեպքում նոր աշխատանքի վայրում մշտական բնակելի տարածություն չունեցող բժիշկ-մասնագետին բնակելի տարածության վարձակալության համար յուրաքանչյուր ամիս տրվում է ֆինանսական աջակցություն՝ հետևյալ չափերով.

Բնակավայր	Բնակելի տարածության վարձակալության համար տրվող ֆինանսական աջակցության չափը (ՀՀ դրամ)
Ստեփանակերտ քաղաքում	60 000
շրջկենտրոններում	40 000
այլ բնակավայրերում	25 000

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2021թ.

N 617-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՈՎ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԿԱՐԳՆ ՈՒ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման նպատակով շահառուների հաշվառման և հերթագրման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ԿԱՐԳԸ ՈՒ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Մույն կարգով կարգավորվում են «Անպտղության հաղթահարման» բյուջետային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով հետազոտությունների և վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման հետ կապված ծավալները, շահառուներին ներկայացվող պահանջները, ընթացակարգերը և դրանց հետ կապված իրավահարաբերությունները:

2. Անպտղության բուժման և հաղթահարման նպատակով պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով հետազոտությունների և բուժման, այդ թվում՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ, բժշկական օգնության և սպասարկման ծավալներն են՝

1) անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում.

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման նպատակով մինչ արհեստական սերմնավորումն ու արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ՝ Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 19-ի N 358-Ն որոշմամբ սահմանված ծավալներով.

3) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառում ամուսնու կամ դոնորական սերմով արհեստական սերմնավորման մեթոդով.

4) արտամարմնային բեղմնավորման իրականացում և տեղադրում արգանդի խոռոչ:

3. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը չեն ներառում փոխնակ մոր, դոնորական ձվաբջջի և դոնորական սերմնաբջջիների համար փոխհատուցման ծախսերը:

4. Դոնորական ձվաբջջի և (կամ) դոնորական սերմնաբջջի օգտագործմամբ, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում փոխնակ մոր, սեռաբջջի (սեռաբջջիների) դոնորի (դոնորների) ծախսերը փոխհատուցվում են շահառուի կողմից:

5. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով անպտղության պատճառագիտության հետազոտման և բուժման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատությունների կողմից:

2. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

6. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված ծավալներից, այդ թվում՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն 2 տարի և ավելի անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում առանց 2 տարվա սահմանափակման) անզավակ, նշված հիմնական պահանջներին համապատասխանող զույգերը՝

1) ամուսինները կամ ամուսիններից մեկը հանդիսանում է Արցախի Հանրապետության քաղաքացի և ամուսնությունը գրանցված է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) ամուսիններից՝ կինը պատկանում է 20-42 (ներառյալ) տարիքային խմբին:

**3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՈՎ
ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՈՒ ԲՈՒԺՄԱՆ,
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ**

**ՎԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՄԱՐԿՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

7. Անպտղության պատճառագիտության հետազոտման ու բուժման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կապակցությամբ շահառուն իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության հետ պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով համապատասխան տեսակի ծառայությունների մատուցման պայմանագիր ունեցող կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) իր ընտրությամբ:

8. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման բժշկական ցուցումների, հակացուցումների, սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված ծավալներին համապատասխան պացիենտին անհրաժեշտ բուժօգնության և վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդի (մեթոդների) որոշման, ինչպես նաև սույն հավելվածի 6-րդ կետի պահանջներին համապատասխանության հարցը քննարկելու և որոշում կայացնելու նպատակով «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում ստեղծվում է հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

9. Հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից (բուժհաստատության գործադիր տնօրեն, բուժական և ամբուլատոր-պոլիկլինիկական գծով տեղակալներ, անպտղության պատճառագիտությամբ զբաղվող երկու մասնագետներ):

10. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով:

11. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Առաջին նիստի ընթացքում հանձնաժողովի անդամներից ընտրվում են հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի անդամներից մեկը:

12. Հանձնաժողովը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար կարող է տալ՝

1) դրական եզրակացություն՝ բուժօգնության ծավալների և տեսակների նշումով.

2) բացասական եզրակացություն՝ բուժօգնության տրամադրման մերժման հիմքերի նշումով:

13. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են և համարակալվում: Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

14. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ դիմումների մուտքագրման փաստի՝ 7-օրյա ժամկետում, անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ:

15. Հանձնաժողովը նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին նախապես ծանուցում է շահառուին:

16. Անպտղության պատճառագիտության հետազոտման ու բուժման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կապակցությամբ պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով քաղաքացին (այսուհետ՝ դիմումատուն) ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ սույն հավելվածի N 1 ձևին համապատասխան.

2) կնոջ, տղամարդու անձնագիր (նույնականացման քարտ).

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթուղթ (ամուսնության վկայական).

4) էպիկրիզ (բժշկական փաստաթղթեր) նախկինում կիրառված հետազոտման մեթոդների ու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին՝ տրված պացիենտի բուժօգնությունն իրականացրած բժշկական հաստատության կամ տարածքային սպասարկման կանանց կոնսուլտացիայի կողմից (եթե կինը մինչև դիմելը հետազոտվել և (կամ) անպտղության կապակցությամբ ստացել է բժշկական օգնություն): Առաջնակի հետազոտվող անպտուղ զույգերի դեպքում բժշկական փաստաթղթեր չեն ներկայացվում:

17. Դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային առողջապահական համակարգ՝ սույն հավելվածի 16-րդ կետով նախատեսված դիմումին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերի ներկայացման դեպքում: Նախատեսված փաստաթղթերի թերի լինելու

դեպքում դիմումատուն տեղեկացվում է և առաջարկվում է ներկայացնել բացակայող փաստաթղթերը:

18. Հանձնաժողովը դիմումը և կից փաստաթղթերն ուսումնասիրում և քննարկում է նիստում մինչև 7 աշխատանքային օրվա, իսկ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում՝ մինչև 14 օրացուցային օրվա ընթացքում:

19. Շահառուն իր ցանկությամբ կարող է մասնակցել իր դեպքի հանձնաժողովային քննարկման արդյունքների ամփոփմանը:

20. Հանձնաժողովի կողմից դիմումատուի գործն ուսումնասիրելու արդյունքում տրվում է եզրակացություն՝ սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան:

21. Արտամարմնային բեղմնավորման իրականացման համար ուղեգրումն իրականացվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից՝ հաշվի առնելով հանձնաժողովից ստացված եզրակացությունը:

22. Դիմումի ընթացքը կարող է մերժվել հետևյալ դեպքերում՝

1) դիմումատուն չի բավարարում սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված պահանջներին.

2) առկա են Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 19-ի N 358-Ն որոշման 11-րդ և 17-րդ կետերով սահմանված վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հակացուցումներ:

23. Դիմումի մերժման դեպքում դիմումատուն չի զրկվում կրկին դիմելու իրավունքից (մերժման հիմքերի վերացման դեպքում):

24. Կազմակերպությունն ստացված արդյունքների մասին Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացնում եռամսյակային և տարեկան հաշվետվություն՝ սույն հավելվածի N 3 ձևին համապատասխան:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Դ Ի Մ ՈՒ Մ

**ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ
ՋՈՒՑԳԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ**

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ _____

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ _____-ԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԿԻՆԸ _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

ԱՄՈՒՄԻՆԸ _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ/ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՅՐԸ _____
(քաղաքը/շրջանը, գյուղը, փողոցը, տունը/շենքը, բնակարանը)

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ (ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՔԱՐՏ) ՀԱՄԱՐԸ, ՍԵՐԻԱՆ _____

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ _____

Դ Ի Մ ՈՒ Մ

Անպտղության կապակցությամբ խնդրում ենք դիտարկել սույն դիմումը և տրամադրել բժշկական օգնության և սպասարկման ստորև ներկայացված տեսակը (տեսակները)

- 1) անպտղության պատճառագիտության հետազոտում ու բուժում.
- 2) վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում (մինչ արհեստական սերմնավորումը/արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ, արհեստական սերմնավորում, արտամարմնային բեղմնավորում՝ ընդգծել/նշել):

Խնդրում եմ (ենք) իմ (մեր) բուժօգնության կազմակերպման ժամկետների և հանձնաժողովի նիստի անցկացման վայրի ու ժամանակի մասին ինձ (մեզ) ծանուցել կապի հետևյալ միջոցով -----

Տեղեկացված ենք, որ
Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը չեն ներառում փոխնակ մոր, դոնորական ձվաբջջի և դոնորական սերմնաբջջիների համար դոնորի (դոնորների) ծառայությունների փոխհատուցումը:

ԴԻՄՈՂՆԵՐ

(կնոջ անունը, ազգանունը, հայրանունը/ստորագրությունը)

(ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը/ստորագրությունը)

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Ց ՈՒ Ն
ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ՊԱՅԻՆՏԻՆ
(ՊԱՅԻՆՏՆՆԵՐԻՆ) ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՐՏԱՂՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ/ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ԲՇՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(բժշկական կազմակերպության անվանումը)

1. Մասնագիտական հանձնաժողովը, մասնակցությամբ հետևյալ մասնագետների (անունները, ազգանունները, հայրանունները)

- 1) _____
- 2) _____
- 3) _____
- 4) _____
- 5) _____

2. Ուսումնասիրելով և քննարկելով շահառու (շահառուներ)՝

_____ -ի
և _____ դիմումը և կից
ներկայացված բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև առկա հետազոտությունների
արդյունքները, հանգեց հետևյալ եզրակացության՝

Պացիենտի (ամուսնական զույգի) մոտ ախտորոշվում է _____

1. Պացիենտի (ամուսնական զույգի) անպտղության դեպքի հետագա վարումը՝

1) հիմնավորված է և անպտղության բուժման և (կամ) հաղթահարման համար
ցուցված է (են) բուժօգնության և սպասարկման հետևյալ ծավալները և
վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների տարատեսակները՝

- անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում
- մինչ արհեստական սերմնավորումը կամ արտամարմնային բեղմնավորումն
իրականացվող պարտադիր հետազոտություններ (նշել/ընդգծել)

արհեստական սերմնավորում՝ ամուսնու սերմով

արհեստական սերմնավորում՝ դոնորական սերմով (դոնորին փոխհատուցումը՝
շահառուի կողմից)

արտամարմնային բեղմնավորման կիրառում՝ սեփական ձվաբջջով

արտամարմնային բեղմնավորման կիրառում՝ դոնորական ձվաբջջով (դոնորին
փոխհատուցումը՝ շահառուի կողմից)

հավելյալ ստացված սաղմի (սաղմերի) տեղադրում արգանդի խոռոչ:

2) մերժվում է, հետևյալ հիմնավորմամբ՝

ա. առկա է հակացուցում _____

բ. այլ նշումներ _____

2. Մենք՝ շահառուներս ծանոթացել ենք մասնագիտական հանձնաժողովի
եզրակացության հետ, տեղեկացված ենք վերարտադրողական օժանդակ
տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդների արդյունավետության և հնարավոր ելքերի
մասին, որի համար ստորագրում ենք (լրացվում է դեպքի ուսումնասիրության
արդյունքների ամփոփմանը շահառուի մասնակցության դեպքում)։

Կինը _____, Ամուսինը _____

3. Նիստին մասնակից հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները,
հայրանունները և ստորագրությունները՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____

4) _____
 5) _____

_____ 20 թ.

Ձև N 3

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 (ԵՌԱՄՍՅԱԿԱՑԻՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ)**

Բուժհաստատության անվանումը _____

Բուժօգնության տեսակը	Տարիքը					
	20-30		30-38		38-42	
Անպտղության պատճառագիտության հետազոտություն ու բուժում						
Շահառուների թիվը						
	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Հղիություն						
Ծննդաբերություն						
Արհեստական սերմնավորում						
Շահառուների թիվը						
	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Հղիություն						
Ծննդաբերություն						
Արտամարմնային բեղմնավորում						
Շահառուների թիվը						
	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Հղիություն						
Ծննդաբերություն						

Բուժհաստատության տնօրեն

_____ (ստորագրություն)

_____ (անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Կ Ա Ր Գ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՈՎ
ՎԵՐԱՐՏԱՊՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԵՐԹԱԳՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով (այսուհետ՝ պետական պատվերի շրջանակներում) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման նպատակով բժշկական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից շահառուների դիմումների մուտքագրման և հերթագրման ընթացակարգերը:

2. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների դիմումների մուտքագրումը և հերթագրումն իրականացվում է՝ ըստ շահառուի դիմելիության ժամկետի, կենտրոնացված ընթացակարգով, միասնական առողջապահական էլեկտրոնային համակարգի միջոցով:

3. Պացիենտի հերթագրման գործընթացում բժշկական կազմակերպությունը պացիենտին (անպտուղ գույզին) ապահովում է ծրագրի շրջանակներում դեպքի վարման վերաբերյալ անվճար խորհրդատվությամբ:

4. Բժշկական կազմակերպությունում պացիենտի բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վարվում է էլեկտրոնային գրանցամատյան՝ սույն հավելվածի ձևին համապատասխան:

5. Բոլոր այն դեպքերում, երբ հերթագրված շահառուի պատճառագիտության հետազոտությունների արդյունքում հայտնաբերվում և եզրակացության մեջ պատճառաբանված հիմնավորմամբ նշվում են արհեստական սերմնավորման կամ բեղմնավորման կիրառման անմիջական ցուցումներ՝ ապա տվյալ շահառուն սպասարկվում է առաջնահերթ: Նշվածի վերաբերյալ որոշումը կայացվում է հանձնաժողովի կողմից, ըստ անհրաժեշտության, այլ մասնագետների ներգրավմամբ, ինչի վերաբերյալ կատարվում է գրառում պացիենտի վարման անհատական քարտում:

6. Հաշվառման և բուժօգնության կազմակերպման գործընթացում ապահովվում է հերթագրման շարունակականության սկզբունքը, համաձայն որի, կնոջ տարիքը որպես շահառու կամրագրվի դիմելու պահին և նա կմնա շահառու անգամ բյուջետային տարվա փոփոխման դեպքում:

7. Հերթագրված հիվանդներն իրենց բժշկական օգնության ժամկետի մասին պացիենտի (ամուսնական գույզի) ընտրությամբ տեղեկացվում են՝ գրավոր, հեռախոսով կամ դիմումում նշված կապի այլ միջոցներով:

8. Բժշկական կազմակերպությունը բնակչությանն ապահովում է ծրագրի շահառուների դիմումների մուտքագրման և հերթագրման՝ սույն կարգի, հանձնաժողովի կազմի, գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ այն փակցնելով բժշկական կազմակերպության ընդունարանում՝ տեսանելի տեղում:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ*
ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Ամուսնական գույզերի դիմելու օրը, ամիսը, տարեթիվը	Կնոջ անունը, ազգանունը, հայրանունը	Ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը	Բնակության վայրը (շրջան, գյուղ/քաղաք, շենք, բն./տուն)	Գրանցման վայրը (շրջան, գյուղ/քաղաք, շենք, բն./տուն)	Շահառուի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սահմանված հիմնական պահանջներին (թվարկել հիմքերը)	Դիմումը մերժվել է (նշել պատճառը)	Անպտղության հետազոտման, բուժման և վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին				Հղիացել է այո/ոչ	Ծննդաբերել է (նշել կենդանածին է այո/ոչ)	Երեխան դուրս է գրվել (եթե 1-ից ավելի՝ ապա նշել երեխաների թիվը)
								Անպտղության պատճառագիտության հետազոտում և բուժում	Արհեստական սերմնավորում	Արտամարմնային բերվնավորման փորձ	Հավելյալ ստացված և սառեցրած սարվի տեղադրում			

* Նախատեսված է «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից դեպքերի գրանցման, հաշվառման և վարման արդյունքում ստացված տվյալների արձանագրման համար:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2021թ.

N 619-Ն

ք. Ստեփանակերտ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՋՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի հունիսի 7-ի «2021 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ՆՀ-2256-Ն հրամանագրի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության 2021 թվականի ամառային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի և շրջանների (Ստեփանակերտ քաղաքի) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել հանրապետական զորակոչային հանձնաժողովին կից բժշկական հանձնախմբի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, Ստեփանակերտի քաղաքապետին՝ Ստեփանակերտ քաղաքի և շրջանների զորակոչային հանձնաժողովների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը հանձնարարել հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին:

4. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) ամառային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ 2021 թվականի հուլիս ամսին.

2) զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիներին վերաբերող նյութերն ուղարկել Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ.

3) ապահովել Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատների կողմից զորակոչիկների սահմանված կարգով ներկայացումը կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ՝ կանխարգելիչ պատվաստումներ ստանալու համար՝ առնվազն մեկ ամիս առաջ մինչև զորակոչը:

5. Առաջարկել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին՝ զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիներին նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը վերցնել անմիջական վերահսկողության տակ:

6. Արցախի Հանրապետության նախարարությունների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին՝

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակները ստանալուց հետո ապահովել նրանց նկատմամբ աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին.

2) իրավասության սահմաններում ապահովել Արցախի Հանրապետության գորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:

7. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին՝

1) ամառային գորակոչի անցկացման համար զինվորական կոմիսարիատներն ապահովել գորակոչային տեղամասերով, սպասարկող անձնակազմերով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով.

2) զինվորական կոմիսարների ներկայացմամբ հաստատել տարածքային գորակոչային հանձնաժողովների կազմերը (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների)՝ դրանցում ընդգրկելով վարչատարածքային միավորի սահմաններում գործող բժշկական հաստատությունների առաջատար բժիշկ-մասնագետներին, իսկ Ստեփանակերտում, անհրաժեշտության դեպքում, նաև՝ հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների բժիշկ-մասնագետներին:

8. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացրած հայտով կազմակերպել ֆյուրո (ոենտգեն) գնում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով և ֆյուրո (ոենտգեն) ծախսվելներով.

2) Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում «COVID-19» նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով գորակոչիկներին սահմանված կարգով ենթարկել պարտադիր թեստավորման:

9. Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝

1) ապահովել գորակոչիկների անվտանգ փոխադրումը և հասարակական կարգի պահպանումը Արցախի Հանրապետության գորակոչային տեղամասերում.

2) ապահովել Արցախի Հանրապետության տարածքում և Արցախի Հանրապետության տարածքից դուրս՝ գորակոչից խուսափող գորակոչիկների որոնումն ու նրանց ներկայանալը գորակոչային տեղամասեր.

3) գորակոչի ընթացքում գորակոչիկներին Ստեփանակերտի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար հանրապետական հավաքակայանին կցել ճանապարհային ոստիկանության համապատասխան անձնակազմ:

10. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ ապահովել գորակոչիկների փոխադրումը զինվորական կոմիսարիատներից հանրապետական հավաքակայան՝ ըստ զինվորական կոմիսարիատների ներկայացրած հայտերի:

11. Սահմանել, որ գորակոչի կազմակերպման ծախսերը փոխհատուցվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին՝ բացառությամբ սույն որոշման 8-րդ կետով կատարվող ծախսերի:

12. Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարին, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ գորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով ամառային գորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Արցախի Հանրապետության սահմանային հաղորդակցության ուղիներում, գորակոչային տարիքի Արցախի Հանրապետության քաղաքացիների Արցախի Հանրապետությունից մեկնումը թույլատրել միայն զինվորական գրքույկներում ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելու կամ հիվանդության պատճառով պահեստագործում գտնվելու, իսկ ամրակցման (նախնական հաշվառման) վկայականներում՝ պարտադիր զինվորական

ծառայության գորակոչից տարկետման իրավունքից օգտվելու մասին զինվորական կոմիսարիատների համապատասխան նշումների առկայության դեպքում:

13. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) 2021 թվականի ամառային գորակոչի ընթացքում գորակոչային ռեսուրսներն առավելագույնս օգտագործելու նպատակով փոխադրման, ավարտական քննությունները, դիպլոմային աշխատանքների պաշտպանություններն ավարտել՝

ա. դպրոցներում, քոլեջներում, ուսումնարաններում՝ մինչև 2021 թվականի հուլիսի 10-ը,

բ. բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը,

գ. Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատին տրամադրել մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ 18 տարին լրացող՝ դպրոցները, քոլեջները և ուսումնարաններն ավարտող և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած արական սեռի քաղաքացիների անվանական ցուցակները:

14. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին և հանրապետական գորակոչային հանձնաժողովին:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ջ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մերգեյ Վլադիմիրի Առստամյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Կարեն Սամվելի Մելքոնյան	- «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն, հանձնաժողովի անդամ
Դավիթ Ռոբերտի Արզումանյան	- Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի անդամ
Մարատ Ֆելիքսի Դավթյան	- Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, հանձնաժողովի անդամ
Գագիկ Յուրիի Հարությունյան	- Արցախի Հանրապետության ոստիկանության հասարակական կարգի ապահովման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Էրիկ Արտյոմի Ծատրյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատի գորակոչի բաժանմունքի պետ, հանձնաժողովի քարտուղար

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ջ Մ
**ՇՐՋԱՆԱԿԵՐԻ (ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արարատ Գեորգիի Խաչատրյան	- Ստեփանակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Զորեն Մերգեյի Ղազարյան	- Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատա- կազմի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Արամ Գեորգիի Սաֆարյան	- Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Հարություն Արարատի Սահակյան	- Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության վարչության ԱԳԲ պետ, հանձնաժողովի անդամ

**ՀԱՌԻՈՒԹԻ, ՔԱՇԱԹԱՂԻ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՎ ՇՈՒՇԻՒ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Անդրեյ Վալերիի Ներսեսյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատի ուղղությունների բաժանմունքի պետ, հանձնաժողովի նախագահ
Արծվիկ Ռոմանի Մախլյան	- Հաղորդի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ալեքսանդր Սուրենի Գրիգորյան	- Շուշիի շրջանի դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Դավիթ Վյաչեսլավի Հակոբյան	- Արցախի Հանրապետության ոստիկանության շտաբի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արսեն Վաղարշակի Աղաբեկյան	- Մարտունու զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Նորայր Սեյրանի Սարգսյան	- Մարտունու շրջանի վարչակազմի գյուղատնտես, հանձնաժողովի անդամ
Մարիամ Կարոյի Այդինյան	- Մարտունու շրջանի դատախազության դատախազ, հանձնաժողովի անդամ
Լեռնիկ Գավրուշայի Աբրահամյան	- Մարտունու շրջանի ոստիկանության շրջանային բաժնի ավագ հետաքննիչ, հանձնաժողովի անդամ

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արծվիկ Անդրանիկի Գաբրիելյան	- Ասկերանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Վահագն Միքայելի Առստամյան	- Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Աշոտ Յուրիի Ղուլյան	- Ասկերանի շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ
Նվեր Սլավայի Մելքումյան	- Ասկերանի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Իգոր Ռոբիկի Սարգսյան	- Մարտակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Գարիկ Գեորգիի Վանյան	- Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Հովիկ Հրաչիկի Սարգսյան	- Մարտակերտի շրջանի դատախազի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Նարեկ Ռուսլանի Սաղյան	- Մարտակերտի շրջանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, հանձնաժողովի անդամ

Կ Ա Ջ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ
ԿԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ

Կարինե Էդուարդի Բաղյան	- թերապևտ
Հակոբ Գրիշայի Հակոբյան	- հոգեբույժ
Սրբուհի Ռոմիկի Բաղդասարյան	- նյարդաբան
Գայանե Սպարտակի Թևոսյան	- քիթ-կոկորդ-ականջաբան
Էդվարդ Ռաֆայելի Ստեփանյան	- վիրաբույժ
Սևակ Էմիրջանի Ապանյան	- ակնաբույժ
Լեոնիդ Եղիշեի Համբարձումյան	- մաշկաբան
Ինեսա Միքայելի Աղամյան	- սրտաբան
Կարեն Դմիտրիի Դավթյան	- վնասվածքաբան
Աիդա Երեմի Հարությունյան	- ատամնաբույժ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021թ.

N 632-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՏԻՄ ՎԵՐԱԲՍՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՆՍԵՐ այդ թվում՝	-	-	-	-
07			ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	4		Հանրային առողջապահական ծառայություններ	-	845,4	1 348,7	2 013,0
		1	Հանրային առողջապահական ծառայություններ	-	845,4	1 348,7	2 013,0
		01	Պետական աջակցություն «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	642,3	1 024,7	1 529,4
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	642,3	1 024,7	1 529,4
		03	Պետական աջակցություն «Հակապալարախիտային դիսպանսեր» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	203,1	324,0	483,6
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	203,1	324,0	483,6
	6		Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	-	(845,4)	(1 348,7)	(2 013,0)
		1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	-	(845,4)	(1 348,7)	(2 013,0)
		01	Պետական աջակցություն «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	338,0	539,2	804,8
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	338,0	539,2	804,8
		10	Դեղերի և բժշկական թափոնների ոչնչացման ծախսեր	-	(1 183,4)	(1 887,9)	(2 817,8)
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	(1 183,4)	(1 887,9)	(2 817,8)

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021թ.

N 640-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,0435 հեկտար անտառը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021թ.

N 641-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մարտակերտի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,5711 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Մարտակերտի քաղաքային համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021թ.

N 642-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս, շրջանի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 2,0 հեկտար թփուտը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 հունիսի 2021թ.

N 643-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 288 ԵՎ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի
N 319 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 288 որոշմամբ հաստատված

1) թիվ 1 հավելվածի 3-րդ և 8-րդ կետերում «մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության» բառերը փոխարինել «Էկոնոմիկայի և գյուղատնտեսության» բառերով.

2) թիվ 2 հավելվածում «ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ» և «մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության» բառերը փոխարինել համապատասխանաբար «ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» և «Էկոնոմիկայի և գյուղատնտեսության» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 26-ի «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» N 319 որոշման 2-րդ կետի՝

1) «ա» ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությունը» բառերով.

2) «գ» ենթակետով հաստատված թիվ 11 հավելվածում «ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 հունիսի 2021թ.

N 647-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի դրույթները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի N 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 209-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «Ծանոթություն» բաժնում՝

1) «2020-2021 թվականների համար նախատեսված վառելափայտի բացթողման գները և առանձնահատկությունները սահմանվում են պետական լիազոր մարմնի կողմից, որը չի կարող գերազանցել Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վառելափայտի բացթողման գները:» նախադասությունը հանել:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«2020-2021 թվականների համար նախատեսված և Արցախի Հանրապետության շրջանների (բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի) բնակիչներին ըստ անհրաժեշտության որպես աջակցություն տրամադրվող մինչև 10 (տասը) խորանարդ մետր վառելափայտի բացթողման անդորրագրերը «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրամադրվում են անվճար»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի նոյեմբերի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 հունիսի 2021թ.

N 654-Ն

ք. Ստեփանակերտ

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ (ՎՆԱՍՎԱԾՔ) ՍՏԱՑԱԾ՝ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ
ՍՏԱՑԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՀԱՍՏԱՐ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՈՒ ՎՃԱՐԵԼՈՒ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Մահմանել, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների (այսուհետ՝ պատերազմական գործողություններ) հետևանքով վիրավորում (վնասվածք) ստացած ամբուլատոր պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում ստացած Արցախի Հանրապետությունում հաշվառված անձանց Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվում է միանվագ դրամական օգնություն՝ 500 000 ՀՀ դրամի չափով:

2. Հաստատել պատերազմական գործողությունների հետևանքով վիրավորում (վնասվածք) ստացած՝ ամբուլատոր պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում ստացած Արցախի Հանրապետությունում հաշվառված անձանց միանվագ դրամական օգնություն նշանակելու ու վճարելու կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում ստեղծել մասնագիտացված հանձնաժողով՝ հանձնաժողովի կազմում ընդգրկելով Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության առնվազն մեկ ներկայացուցիչ, և հաստատել մասնագիտացված հանձնաժողովի աշխատակարգը:

4. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 90-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական օգնություն ստացած զինձառայողների և պատերազմական գործողությունների հետևանքով 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց տվյալները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՎԻՐԱՎՈՐՈՒՄ (ՎՆԱՍՎԱԾՔ) ՍՏԱՑԱԾ՝ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՈՒ ՎՃԱՐԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների (այսուհետ՝ պատերազմական գործողություններ) հետևանքով վիրավորում (վնասվածք) ստացած՝ ամբուլատոր պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում ստացած Արցախի Հանրապետությունում հաշվառված անձանց միանվագ դրամական օգնություն (այսուհետ՝ դրամական օգնություն) նշանակելու և վճարելու հետ կապված հարաբերությունները:

2. Դրամական օգնության իրավունք ունեն պատերազմական գործողությունների հետևանքով վիրավորում (վնասվածք) ստացած՝ Արցախի Հանրապետությունում հաշվառված այն անձինք, ովքեր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը բժշկական հաստատություններում (անկախ ենթակայությունից) ամբուլատոր պայմաններում ստացել են բժշկական օգնություն կամ սպասարկում (այսուհետ՝ շահառու)՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 90-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական օգնություն ստացած զինծառայողների և պատերազմական գործողությունների հետևանքով 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց:

3. Ամբուլատոր պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում ստացած անձանց են հավասարեցվում նաև սույն կարգի 2-րդ կետում նշված պատերազմական գործողությունների ընթացքում վիրավորում (վնասվածք) ստացած այն անձինք, ովքեր տարաբնույթ պատճառներով չեն դիմել բժշկական օգնություն ստանալու համար, կամ դիմել և տարաբնույթ պատճառներով չեն ստացել այն:

4. Դրամական օգնություն ստանալու համար շահառուն դիմում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով ստեղծված մասնագիտացված հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով)՝ ներկայացնելով.

1) դիմում.

2) անձը հաստատող փաստաթուղթ.

3) հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանք.

4) բժշկական հաստատությունում ամբուլատոր պայմաններում բժշկական օգնություն կամ սպասարկում ստանալու մասին բժշկական փաստաթուղթ, իսկ սույն կարգի 3-րդ կետում նշված անձինք՝ վիրավորում (վնասվածք) ստացած լինելը հավաստող ապացույցներ.

5) հանձնաժողովի պահանջով՝ այլ փաստաթղթեր:

5. Հանձնաժողովը տասնհինգ օրվա ընթացքում ուսումնասիրում ու քննարկում է շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը և ապացույցները, որի արդյունքում կազմում է եզրակացություն՝ դրամական օգնություն նշանակելու կամ դրամական օգնության նշանակումը մերժելու մասին:

6. Հանձնաժողովի կողմից երկու աշխատանքային օրվա ընթացքում եզրակացությունը ներկայացվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ համաձայնեցման նպատակով:

7. Դրամական օգնության նշանակումը մերժելու դեպքում հանձնաժողովը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է շահառուին՝ նշելով մերժման պատճառները:

8. Դրամական օգնություն նշանակելու դեպքում հանձնաժողովը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է շահառուին:

9. Ֆինանսավորման ենթակա, համաձայնեցված եզրակացությունը հանձնաժողովի կողմից ներկայացվում է Արցախի Հանրապետության

առողջապահության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժին՝ (այսուհետ՝ ֆինանսատնտեսագիտական բաժին) ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

10. Ֆինանսատնտեսագիտական բաժինը դրամական միջոցները փոխանցելուց հետո, այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է շահառուին:

11. Դրամական օգնությունը վճարվում է «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի միջոցով՝ կանխիկ եղանակով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2021թ.

N 658-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում, N 2 հավելվածում կատարել փոփոխություններ և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի, N 2 հավելվածի N 1 աղյուսակի, N 3 և N 4 հավելվածների ցուցանիշներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի մայիսի 27-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-73-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)		
	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	2,767,376.7	4,767,376.7	7,767,376.7
այդ թվում՝			
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,000,000.0	3,000,000.0	6,000,000.0
Պաշտոնական դրամաշնորհներ	1,667,376.7	1,667,376.7	1,667,376.7
Այլ եկամուտներ	100,000.0	100,000.0	100,000.0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**«ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՐՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱԾԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի
N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՐՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՍԵՐ այդ թվում	-	24,202,210.0	68,800,315.3	111,351,384.6
01			ԸՆՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	1,545,278.0	3,796,071.0	6,509,834.6
	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	-	22,213.0	45,168.0	75,484.6
		1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	-	22,213.0	45,168.0	75,484.6
		03	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	22,213.0	45,168.0	75,484.6
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «ՀՀ-ում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբ» առանձնացված ստորաբաժանում	-	22,213.0	45,168.0	75,484.6
	7		Պետական պարտքի գծով գործառնություններ	-	1,500,000.0	3,700,000.0	6,400,000.0
		1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	1,500,000.0	3,700,000.0	6,400,000.0
		01	Ներգրավված փոխառու միջոցների պասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	1,500,000.0	3,700,000.0	6,400,000.0
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	1,500,000.0	3,700,000.0	6,400,000.0
	8		Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	-	23,065.0	50,903.0	34,350.0

	1	Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	-	23,065.0	50,903.0	34,350.0
	01	Դոտացիաների տրամադրում համայնքների բյուջեներին	-	23,065.0	50,903.0	34,350.0
		ԱՀ ֆինանսների նախարարություն	-	23,065.0	50,903.0	34,350.0
03		ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	-	424,697.0	1,058,197.3	1,901,400.0
	1	Հասարակական կարգ և անվտանգություն	-	424,697.0	1,058,197.3	1,901,400.0
	2	Ազգային անվտանգություն	-	424,697.0	1,058,197.3	1,901,400.0
	01	Ազգային անվտանգության ապահովում	-	424,697.0	1,058,197.3	1,901,400.0
		ԱՀ ազգային անվտանգության ծառայություն	-	424,697.0	1,058,197.3	1,901,400.0
04		ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	2,808,300.0	6,185,950.0	9,990,000.0
	1	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	-	600,000.0	2,300,000.0	4,000,000.0
	1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	-	600,000.0	2,300,000.0	4,000,000.0
	05	Աջակցություն Արցախի ներդրումային հիմնադրամին	-	600,000.0	2,300,000.0	4,000,000.0
		ԱՀ ֆինանսների նախարարություն	-	600,000.0	2,300,000.0	4,000,000.0
	2	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	-	699,500.0	2,473,750.0	4,000,000.0
	1	Գյուղատնտեսություն	-	699,500.0	2,473,750.0	4,000,000.0
	10	Աջակցություն գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին	-	450,000.0	1,800,000.0	3,000,000.0
		ԱՀ Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն	-	450,000.0	1,800,000.0	3,000,000.0
	11	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	249,500.0	673,750.0	1,000,000.0
		ԱՀ Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն	-	249,500.0	673,750.0	1,000,000.0
	3	Վառելիք և էներգետիկա	-	1,220,000.0	690,000.0	690,000.0
	5	Էլեկտրաէներգիա	-	1,220,000.0	690,000.0	690,000.0
	01	Էլեկտրաէներգիայի, գազամատակարարման և կապի ծառայությունների սուբսիդավորում	-	1,220,000.0	690,000.0	690,000.0
		ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	-	1,220,000.0	690,000.0	690,000.0
	9	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	288,800.0	722,200.0	1,300,000.0

	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	288,800.0	722,200.0	1,300,000.0
	04	Ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով ԱՀ շրջանների կարողությունների զարգացման ծախսեր	-	288,800.0	722,200.0	1,300,000.0
		Ասկերանի շրջանի վարչակազմ		72,900.0	182,200.0	328,000.0
		Հադրութի շրջանի վարչակազմ		18,400.0	46,100.0	83,000.0
		Մարտակերտի շրջանի վարչակազմ		73,400.0	183,400.0	330,000.0
		Մարտունու շրջանի վարչակազմ		73,400.0	183,300.0	330,000.0
		Շահումյանի շրջանի վարչակազմ		6,400.0	16,100.0	29,000.0
		Շուշիի շրջանի վարչակազմ		28,300.0	71,100.0	128,000.0
		Քաջաթաղի շրջանի վարչակազմ		16,000.0	40,000.0	72,000.0
06		ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՄՈՒՍԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	300,000.0	2,000,000.0	3,000,000.0
3		Ջրամատակարարում	-	300,000.0	2,000,000.0	3,000,000.0
	1	Ջրամատակարարում	-	300,000.0	2,000,000.0	3,000,000.0
	02	Ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում	-	300,000.0	2,000,000.0	3,000,000.0
		ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն		300,000.0	2,000,000.0	3,000,000.0
10		ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	17,647,000.0	48,811,000.0	79,984,500.0
7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	17,647,000.0	48,811,000.0	79,984,500.0
	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	17,647,000.0	48,811,000.0	79,984,500.0
	04	Բնակարան վարձելու կամ ժամանակավոր կացարանով ապահովման նպատակով իրականացվող միջոցառումներ	-	647,000.0	1,811,000.0	2,984,500.0
		ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		647,000.0	1,811,000.0	2,984,500.0
	05	2020 թվականի պատերազմական գործողությունների հետևանքով ծանր ֆինանսատնտեսական վիճակում հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարման և կրած վնասների պետական աջակցություն	-	17,000,000.0	47,000,000.0	77,000,000.0
		ԱՀ ֆինանսների նախարարություն		15,000,000.0	39,000,000.0	65,000,000.0

			ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե	-	2,000,000.0	8,000,000.0	12,000,000.0
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	1,476,935.0	6,949,097.0	9,965,650.0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	(23,065.0)	(50,903.0)	(34,350.0)
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	(23,065.0)	(50,903.0)	(34,350.0)
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	(23,065.0)	(50,903.0)	(34,350.0)
			ԱՀ կառավարություն	-	(23,065.0)	(50,903.0)	(34,350.0)
	2		Այլ ծախսեր	-	1,500,000.0	7,000,000.0	10,000,000.0
		1	Այլ ծրագրեր	-	1,500,000.0	7,000,000.0	10,000,000.0
		02	Կապիտալ ներդրումներ	-	1,500,000.0	7,000,000.0	10,000,000.0
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	1,393,759.0	6,693,759.0	9,493,759.0
			Ստեփանակերտի քաղաքապետարան	-	100,000.0	300,000.0	500,000.0
			Հաղրութի շրջանի վարչակազմ	-	1,034.0	1,034.0	1,034.0
			Շահումյանի շրջանի վարչակազմ	-	2,038.1	2,038.1	2,038.1
			Շուշիի շրջանի վարչակազմ	-	3,168.9	3,168.9	3,168.9

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՍՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 3

Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի հունիսի 22-ի N 658-Ն որոշման

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)		
	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՍԵՆԸ	21,434,833.3	64,032,938.6	103,584,007.9
այդ թվում՝			
Փոխառու գույք վիճույթներ	21,434,833.3	64,032,938.6	103,584,007.9
1. Վարկերի և փոխատվությունների ստացում	21,434,833.3	66,132,938.6	108,354,007.9
2. Ստացված վարկերի և փոխատվությունների մարում	-	(2,100,000.0)	(4,770,000.0)

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՍՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ.դրամ)

ՀՀ	ԱՀ շրջանների և համայնքների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)		
		Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	ԸՆԴԱՄԵՆԸ	23,065.0	50,903.0	34,350.0
	այդ թվում՝			
2	Ասկերանի շրջան	9,371.0	22,723.0	15,510.0
	այդ թվում՝			
3	Այգեատան		355.0	
4	Աստղաշեն	510.0	1,100.0	
7	Բերքաձոր	1,200.0	2,380.0	2,380.0
10	Բվանյան	750.0	2,550.0	2,550.0
11	Լուսաձոր	45.0	362.0	
12	Խնապատ		544.0	
16	Խնածախ		365.0	
17	Խնձրիստան		197.0	
18	Խրամորթ		1,030.0	300.0
21	Հարավ		55.0	
27	Նախիջևանիկ	557.0	1,570.0	1,140.0
28	Նորագյուղ	385.0	1,650.0	200.0
30	Շոշ	1,865.0	3,300.0	3,100.0
33	Սամնաղբյուր	1,324.0	2,240.0	2,240.0
35	Սարուշեն	180.0	615.0	400.0
37	Պատարա	450.0	975.0	
38	Վարդաձոր	1,960.0	3,200.0	3,200.0
41	Փառուխ	45.0	55.0	
42	Քռասնի	100.0	180.0	
4	Մարտակերտի շրջան	236.0	400.0	
	այդ թվում՝			
40	Վարնկաթաղ	236.0	400.0	
5	Մարտունու շրջան	13,458.0	27,780.0	18,840.0
	այդ թվում՝			
2	Ճարտար ք.	1,368.0	4,770.0	3,090.0
5	Բերդաշեն	3,385.0	6,000.0	6,000.0
6	Գիշի	1,500.0	3,130.0	3,130.0
9	Թաղավարդ	1,815.0	2,900.0	480.0
11	Խնուշինակ		270.0	
15	Կարմիր Շուկա	330.0	1,080.0	400.0
16	Կոյխազաշեն	390.0	760.0	
19	Հերհեր	40.0	220.0	
25	Ննգի	170.0	600.0	
26	Նորշեն		380.0	
32	Սոս	3,480.0	5,740.0	5,740.0
33	Սպիտակաշեն	700.0	1,200.0	
35	Քերթ	280.0	730.0	

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2021թ.

N 659-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 378 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Դաշուշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,066 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2021թ.

N 660-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,15 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Քոասնիի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հունիսի 2021թ.

N 672-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՄԻ 21-Ի N 390-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ը մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 21-ի «Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցների օգտագործման կարգը հաստատելու մասին» N 390-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 3-րդ կետի «քառասուն» բառը փոխարինել «վաթսուն» բառով.

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«4. Նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցներն օգտագործվում են՝ Նախարարության համակարգի աշխատողների նյութական խրախուսման համար և համակարգի զարգացման, մասնավորապես՝ օբյեկտներում տեխնիկական հսկողության իրականացման համար տեխնիկական պարկի վերազինման, շինարարական օբյեկտներում պարբերաբար ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ քանակությամբ տրանսպորտային միջոցների ու վառելիքի, գույքի և այլ սարքավորումների, ինչպես նաև անհրաժեշտ այլ պարագաների ձեռք բերման նպատակով:».

3) 5-րդ կետի «անհրաժեշտության» բառից հետո լրացնել «՝ համապատասխանաբար Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարի և աշխատակազմի ղեկավարի հրամաններով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«8» հունիսի 2021թ.

N 133-Ս

ք. Ստեփանակերտ

**«ՌԻՆԱ ԴԵՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ

1.«ՌԻՆԱ ԴԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Թումանյան 54/34) բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա տրամադրելու վերաբերյալ հայտը բավարարել և տրամադրել **«ընտանեկան ստոմատոլոգիական»** գործունեություն իրականացնելու լիցենզիա, բժշկական օգնության և սպասարկման ձևը՝ արտահիվանդանոցային:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնին ապահովել՝

1) տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ս.ՀԱՅՐԻՑԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

2021 թվականի հունիսի 21-ի

**ՎԵՐԴՅԱՆ ԱՐԱՄ ՎՈԼՈՂՅԱՅԻ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 141

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ հոդվածներով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի լիցենզավորման հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 21-ի N 08 եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2016 թվականի մայիսի 20-ին Վերդյան Արամ Վոլոդյայի անհատ ձեռնարկատիրոջը տրված հացահատիկային մշակաբույսերի (ներառյալ եգիպտացորենի) արտադրության և վաճառքի N 015 լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա):

2. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում:

2) սույն հրամանի առաքումն Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Արմեն Թովմասյան

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

2021 թվականի հունիսի 10-ի

**ՌՈՑԱԼԹԻ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՌՈՑԱԼԹԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ
ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՁԵՎԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 144-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքի 13.8-րդ հոդվածի 3.1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սահմանել ռոյալթի վճարողի կողմից 2021 թվականի ռոյալթի կանխավճարի մեծությունը ինքնուրույն որոշելու մասին հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

Դ. ՊՈՂՈՍՅԱՆ

**2021 թվականի հունիսի 10
ք. Ստեփանակերտ**

Ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՑԱԼԹԻ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՌՈՑԱԼԹԻԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ	Փաստաթղթի հերթական համարը <hr/> (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Ռոյալթի վճարողի անվանումը	2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) <div style="border: 1px solid black; width: 100%; height: 20px; margin-top: 5px;"></div>
3. Ներկայացման օրը	ամիսը
<div style="border: 1px solid black; width: 20px; height: 20px; display: inline-block;"></div> <div style="border: 1px solid black; width: 20px; height: 20px; display: inline-block; margin-left: 5px;"></div>	<div style="border: 1px solid black; width: 20px; height: 20px; display: inline-block;"></div> <div style="border: 1px solid black; width: 20px; height: 20px; display: inline-block; margin-left: 5px;"></div>

1) «Փաստաթղթի հերթական համարը» մասում լրացվում է հարկային մարմնում առկա՝ կազմակերպության անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:

2) 1-ին կետում լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպատիրական ձևը, իսկ 2-րդ կետում՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

3) 3-րդ կետում լրացվում է կազմակերպության կողմից հարկային մարմին հայտարարության ներկայացման օրը և ամիսը:

Նախորդ տարվա նկատմամբ ռոյալթի գումարը պակաս նախատեսելու հետևանքով 2021 թվականի ռոյալթի կանխավճարները հաշվարկել հետևյալ չափով՝	Եռամսյա- կային չափը [4]	Ընդամենը 2021 թվականի համար [5]
Տեղյակ եմ կանխավճարների տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի ռոյալթից պակաս լինելու դեպքում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքի 13.8-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված պատասխանատվության մասին:		

4) [4] սյունակում լրացվում է նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա ռոյալթի գումարը պակաս նախատեսելու (այդ թվում՝ ընթացիկ տարում ռոյալթի հաշվարկման օբյեկտ չնախատեսելու) դեպքում կազմակերպության կողմից 2021 թվականի համար հաշվարկված կանխավճարի եռամսյակային մեծությունը:

5) [5] սյունակում լրացվում է կազմակերպության կողմից 2021 թվականի համար հաշվարկված կանխավճարի գումարը:

Կազմակերպության տնօրեն _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Հաշվապահ _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում հայտարարությունը լրացվում է երկու օրինակից:

Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է
կազմակերպությանը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» հունիսի 2021թ.

N 135

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 15-ի N375-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **ֆիզիկական անձ Զաուր Նիկոլայի Անդրասյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00550 լիցենզիայի N00002 ներդիր.

2) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վլադիմիրի Խաչիյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00698 լիցենզիայի N00005 ներդիր:

2. Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր Վասիլի Միքայելի Սայիյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00542 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

2) **անհատ ձեռնարկատեր Գևորգ Շիրաստանի Հայրապետյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00685 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

3) **անհատ ձեռնարկատեր Նելսոն Վազգենի Ստեփանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00728 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

4) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վյաչեսլավի Ղուլյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական

նուկլորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՄՈ00733 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

5) **Ֆիզիկական անձ Վիտալի Արտեմի Պողոսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական նուկլորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՄՈ00740 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

6) **Ֆիզիկական անձ Մհեր Մերյոժայի Խամփերյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական նուկլորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՄՈ00745 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

7) **Ֆիզիկական անձ Զատուր Նիկոլայի Անդրեսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական նուկլորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՄՈ00550 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը.

8) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վյաչեսլավի Ղուլյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական նուկլորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՄՈ00698 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմինին:

Հայկ Խանումյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2021 թվականի հունիսի 14

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 26-Ի N 47-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1033-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2006 թվականի մայիսի 26-ի «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 47-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝

«ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ»,

2) «ՀՀՇՆ II-6-02-06 Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՀՇՆ 20.04- Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»,

3) «ՄՆԻՊ 2.04.02-84* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՀՇՆ 40-01.02 Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,

4) «ՄՆԻՊ II-23-81* Պողպատյա կոնստրուկցիաներ» պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ՀՀՇՆ 53-01 Պողպատե կոնստրուկցիաներ»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԱՐԳՍՅԱՆ

2021 թվականի հունիսի 14
ք. Ստեփանակերտ